ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ—ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավեր

Տեխնիկական առաջադրանքով (Հավելված Ա)

Խորհրդատվական ծառայություններ բիզնես գործընթացների վերլուծության, SS կիրառական համակարգերի գնահատման և ապագա SS ինտեգրված համակարգի գնման տեխնիկական բնութագրի մշակման համար

Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավեր

(Խորհրդատվական ծառայություններ — խորհրդատուների ընտրություն)

Գնման գործընթացն իրականացվում է երկփուլ ընթացակարգով։ Սույն Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերը հանդիսանում է առաջին փուլը և օգտագործվում է բացառապես որակավորված խորհրդատվական ընկերությունների (այսուհետ՝ Խորհրդատու) բացահայտման և ընտրված մասնակիցների ցուցակի (shortlist) ձևավորման նպատակով՝ հիմնվելով վերջիններիս որակավորման, փորձառության և ինստիտուցիոնալ կարողությունների վրա։

Սույն փուլը հանդիսանում է նախնական որակավորման և շուկայի հնարավոր մասնակիցների բացահայտման փուլ և այն չի կարող դիտարկվել որպես պայմանագիր կնքելու առաջարկ կամ պայմանագիր կնքելու պարտավորություն։

Այս փուլում Խորհրդատուներից չի պահանջվում ներկայացնել տեխնիկական կամ ֆինանսական առաջարկ։ Ինչպես նաև, չեն գնահատվելու Խորհրդատուի հիմնական անձնակազմը և փորձագետները։

Ընտրության երկրորդ փուլում ընտրված մասնակիցների ցուցակում ընդգրկված Խորհրդատուները կհրավիրվեն ներկայացնելու ամբողջական տեխնիկական և ֆինանսական առաջարկներ՝ Առաջարկների ներկայացման հարցման (Request for Proposals — RFP) հիման վրա՝ գնային առաջարկների ներկայացման համար սահմանված փաստաթղթերին և գաղտնիության պահպանման դրույթներին համապատասխան։

Սույն փաստաթղթին որպես Հավելված Ա կցված Տեխնիկական առաջադրանքը այս փուլում տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և ներկայացնում է առաջադրանքի նախնական շրջանակը։ Տեխնիկական առաջադրանքի մանրամասն դրույթները կկարգավորեն ընտրության երկրորդ փուլը։

Հրապարակող կազմակերպություններ՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ (ԱՀԸ) և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ (ԲԵ) ՝ համատեղ՝ **«Ընկերություններ»:**

Ընկերությունները սույն գործընթացն իրականացնում են համատեղ, իսկ պայմանագրային կառուցվածքը և իրավունքների ու պարտավորությունների բաշխումը կսահմանվեն գնման հետագա փաստաթղթերով և/կամ պայմանագրերով:

Առաջադրանքի անվանումը՝ Խորհրդատվական ծառայություններ բիզնես գործընթացների վերլուծության համար, SS կիրառական համակարգերի գնահատում և ապագա ինտեգրված SS համակարգի գնման տեխնիկական բնութագրի մշակում:

Գնման ծածկագիր՝ PR-2/07.2026

ԱՀԸ-ն և ԲԵ-ն Հայաստանի Հանրապետությունում գործող վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություններ են, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարգավորման դաշտում: Ընկերությունները վերաֆինանսավորում են գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված՝ սահմանված չափանիշներին համապատասխանող բնակարանային վարկերը և իրականացնում են պետական աջակցությամբ բնակարանային ապահովման և սուբսիդավորման ծրագրեր: Իրենց գործունեության տեխնոլոգիական հիմքերն ամրապնդելու նպատակով Ընկերությունները մտադիր են գնման գործընթացի հաջորդ փուլում ձեռք բերել ապագա ինտեգրված SS համակարգ:

Սույն խորհրդատվական ծառայության նպատակն է ապահովել, որպեսզի Ընկերությունները կարողանան ձեռք բերել ապագա ինտեգրված SS համակարգ՝ հիմնվելով հիմնավոր, ստուգված (վավերացված) և գնման գործընթացի համար լիարժեք պատրաստ տեխնիկական բնութագրի վրա:

Մասնավորապես, խորհրդատվական ծառայության նպատակն է՝

1. Փաստաթղթավորել և վերլուծել Ընկերությունների ընթացիկ վերաֆինանսավորման և հարակից բիզնես գործընթացները, կիրառական SS համակարգերը, տվյալների փոխանակման և հսկողական մեխանիզմները՝ գնման գործընթացի համար բավարար մակարդակով, առաջարկել գործընթացների օպտիմալացման չափելի ցուցանիշներ և դրանք համաձայնեցնել համապատասխան շահառուների հետ։
2. Սահմանել թիրախային (To-Be) գործառնական մոդելը և տրամաբանական թիրախային ճարտարապետությունը, որոնք առավելագույնի կհասցնեն օպտիմալացման ցուցանիշները, և մշակել ապագա ինտեգրված SS համակարգի ամբողջական բիզնես, գործառնական, ոչ գործառնական, ինտեգրման, տվյալների, հաշվետվողականության և անվտանգության պահանջները։
3. Պատրաստել գնային առաջարկների ներկայացման գործընթացի համար լիարժեք Տեխնիկական առաջադրանք, գնահատման չափանիշներ, առաջարկների ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավելվածներ և ներդրման ճանապարհային քարտեզ։

Ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են Հավելված Ա-ով կցված Տեխնիկական առաջադրանքում։

Առաջադրանքի տևողությունը՝ պայմանագրի ստորագրման օրվանից չորս (4) ամիս։

Ընկերությունները հրավիրում են իրավասու Խորհրդատուներին հայտնելու իրենց հետաքրքրվածությունը Ծառայությունների մատուցման վերաբերյալ։ Շահագրգիռ Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն, որը հավաստում է, որ նրանք ունեն Ծառայությունների կատարման համար պահանջվող որակավորում և համապատասխան փորձառություն։

Մասնավորապես, Հետաքրքրվածության հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը՝ կազմակերպության հիմնական գործունեության և գործունեության տարիների մանրամասն նկարագրություն, մատուցված

ծառայություններ, ավարտված ծրագրեր, ինչպես նաև կազմակերպության փորձառության հիմնավորում՝ երաշխավորող հղումներով (references)՝ կոնտակտային անձանց տվյալների նշումով:

Խորհրդատուն պետք է ունենա բավարար ռեսուրսներ և ինստիտուցիոնալ կարողություն՝ ծառայությունների շրջանակն իրականացնելու համար: Նվազագույն պահանջները ներառում են՝

- Առնվազն հինգ (5) տարվա անընդմեջ գործունեության փորձ՝ բիզնես վերլուծության, ՏՏ խորհրդատվության և/կամ թվային փոխակերպման խորհրդատվական ծառայությունների մատուցման ոլորտում:
- Վերջին հինգ (5) տարիների ընթացքում հաջողությամբ ավարտված առնվազն երեք (3) համադրելի առաջադրանքների փորձ, որոնք ներառել են ֆինանսական հաստատությունների համար (նախընտրելի է) բիզնես գործընթացների ամբողջական՝ սկզբից մինչև վերջ վերլուծություն և ՏՏ համակարգի / լուծման տեխնիկական բնութագրի պատրաստում: Ֆինանսական հաստատությունները կարող են ներառել բանկեր, վարկային կազմակերպություններ, վերաֆինանսավորող կազմակերպություններ, միկրոֆինանսական հաստատություններ կամ նմանատիպ կազմակերպություններ:
- Առնվազն մեկ (1) համադրելի առաջադրանքի փորձ, որը ներառել է հիմնական ֆինանսական ծառայությունների ՏՏ համակարգի համար գնման գործընթացին պատրաստ Տեխնիկական առաջադրանքի կամ գործառնական տեխնիկական բնութագրի պատրաստում, որի հիման վրա պատվիրատուն հետագայում իրականացրել է համապատասխան համակարգի ձեռքբերումը:
- Որակի կառավարման համակարգ,
- Գաղտնի տեղեկատվության հետ աշխատանքին համարժեք տեղեկատվական անվտանգության մակարդակ:

<u>Խորհրդատուի հիմնական անձնակազմը / փորձագետները սույն փուլում չեն գնահատվելու:</u>

Շահերի բախում

Շահագրգիռ Խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Տեխնիկական առաջադրանքում (Հավելված Ա) սահմանված շահերի բախման կարգավորումներին: Հաշվի առնելով սույն առաջադրանքի բնույթը՝ հաջորդող Առաջարկների ներկայացման հարցման արդյունքում ընտրված Խորհրդատուն՝ իր մայր ընկերության, դուստր ընկերությունների, փոխկապակցված անձանց, համատեղ գործունեության գործընկերների, ենթակապալառուների և սույն առաջադրանքի շրջանակում առաջարկված յուրաքանչյուր Հիմնական փորձագետի հետ միասին, ինքնաշխատ կերպով և անվերապահորեն զրկվելու է ապագա ինտեգրված ՏՏ համակարգի կամ դրա որևէ բաղադրիչի հետագա ցանկացած գնման ընթացակարգին ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցելու իրավունքից՝ որպես մասնակից, կոնսորցիումի անդամ, ենթակապալառու, մատակարար, ինտեգրատոր, խորհրդատու կամ մասնակցի գործընկեր, կամ դրանց հետ փոխկապակցված անձ:

Սույն սահմանափակման իմաստով՝ սույն բաժնում օգտագործված բոլոր եզրույթները մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենսդրությանը համապատասխան՝ այնքանով, որքանով այդ եզրույթները սահմանված կամ կարգավորված են այդ օրենսդրությամբ, իսկ մնացած դեպքերում՝ սույն Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերի և Տեխնիկական առաջադրանքի համատեքստին ու նպատակին համապատասխան:

Սույն սահմանափակման պահպանումը կհանդիսանա ընտրված Խորհրդատուի հետ կնքվելիք պայմանագրի էական պայման: Սույն սահմանափակման խախտումը կարող է հանգեցնել Հետաքրքրվածության հայտի կամ առաջարկի մերժման, որակազրկման, պայմանագրի լուծման, ապագա ինտեգրված ՏՏ համակարգին վերաբերող հետագա գործընթացներից բացառման և/կամ պայմանագրով ու կիրառելի օրենսդրությամբ նախատեսված այլ հետևանքների:

Սույն առաջադրանքի նկատմամբ շահագրգռվածություն հայտնող Խորհրդատուները Հետաքրքրվածության հայտ ներկայացնելուց առաջ պետք է գնահատեն այս սահմանափակման հետևանքները։

Հետաքրքրվածության հայտերի ներկայացում

Ներկայացման վերջնաժամկետ՝ 14.08.2026, ժամը 18:00՝ Երևանի տեղական ժամանակով (AMT)։ Սույն վերջնաժամկետից հետո ստացված հայտերը չեն ընդունվելու՝ անկախ ներկայացման եղանակից։ Ներկայացման ձևաչափ. հայտերը կարող են ներկայացվել կամ փակ ծրարներով՝ ստորև նշված Տարբերակ 2-ի համաձայն, կամ էլեկտրոնային եղանակով՝ ստորև նշված Տարբերակ 1-ի համաձայն։

Հետաքրքրվածության հայտերը (պետք է ներառեն միայն որակավորման փաստաթղթերը, առանց տեխնիկական կամ ֆինանսական առաջարկի) սույն փուլում կարող են ներկայացվել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

Տարբերակ 1 — Էլեկտրոնային ներկայացում էլեկտրոնային փոստով

Հայտատուները կարող են իրենց փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացնել էլեկտրոնային փոստով՝

Էլեկտրոնային փոստ ՝procurement@nmc.am

Առարկա դաշտում (Subject) ՝*Հետաքրքրվածության հայտ. Խորհրդատվական ծառայություններ՝ Բիզնես գործընթացների վերլուծության և ապագա ինտեգրված ՏՏ համակարգի տեխնիկական բնութագրի պատրաստման համար։*

Էլեկտրոնային եղանակով ներկայացվող փաթեթը պետք է ներառի Հետաքրքրվածության հայտի ներկայացման ստուգաթերթում (Առդիր Ա) նշված բոլոր փաստաթղթերը՝ PDF ձևաչափով։ Հետաքրքրվածության հայտում ներառված

ցանկացած գնային կամ ֆինանսական տեղեկատվություն հաշվի չի առնվելու և չի հանդիսանալու սույն փուլում գնահատման մաս։

Տարբերակ 2 — Փաստաթղթային (թղթային) ներկայացում ԱՀԸ-ի գրասենյակ

Շահագրգիռ կազմակերպությունները կարող են Հետաքրքրվածության հայտի իրենց ամբողջական փաթեթը ներկայացնել կնքված (փակ) ծրարով հետևյալ հասցեով՝

Հասցե՝ Հանրապետության փող., 22-7/1 շենք
Աշխատանքային ժամեր՝ 09:00-18:00

Իրավունքների վերապահում

Թյուրըմբռնումից խուսափելու համար՝ սույն Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերը հրապարակվում է բացառապես հնարավոր ծառայություններ մատուցողների բացահայտման և նախնական որակավորման նպատակով:

Սույն հրավերը չի հանդիսանում օֆերտա, հրապարակային օֆերտա, առաջարկների ներկայացման հրավեր կամ Ընկերությունների կողմից գնման գործընթացը շարունակելու, որևէ մասնակցի ընտրելու կամ պայմանագիր կնքելու պարտավորություն։

Սույն գործընթացը չի համարվում հրապարակային մրցույթ կամ սակարկություն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթների և այլ կիրառելի օրենսդրության դրույթների իմաստով:

Սույն փաստաթղթում նկարագրված առաջադրանքի շրջանակն ինդիկատիվ է և կարող է ճշգրտվել գնման հաջորդ փուլի ընթացքում։

Ընկերությունները վերապահում են իրենց իրավունքը՝ իրենց բացառիկ հայեցողությամբ և առանց պատճառաբանելու պարտավորության, ցանկացած

հետաքրքրված անձից պահանջելու պարզաբանումներ, փոփոխելու գնման շրջանակը կամ ժամանակացույցը, երկարաձգելու ցանկացած ժամկետ, ինչպես նաև մինչև պայմանագրի ստորագրումը ցանկացած պահի կասեցնելու, չեղարկելու կամ վերսկսելու գնման ընթացակարգը՝ յուրաքանչյուր դեպքում առանց հետաքրքրված անձանց առջև որևէ պատասխանատվության։

Հետաքրքրվածության հայտի ներկայացումը չի ստեղծում մասնակիցների կարճ ցուցակում ընդգրկվելու, առաջարկ ներկայացնելու հրավեր ստանալու, հաղթող ճանաչվելու կամ պայմանագիր կնքելու իրավունք կամ իրավաչափ ակնկալիք։

Հետաքրքրվածության հայտի պատրաստման և ներկայացման, ինչպես նաև հետագա գնման ընթացակարգին մասնակցության հետ կապված ծախսերն ամբողջությամբ կրում են հետաքրքրված անձինք։ Ընկերությունները որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չեն կրում այդ ծախսերի համար՝ անկախ գործընթացի ընթացքից կամ արդյունքներից։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Խորհրդատվական ծառայություններ բիզնես գործընթացների վերլուծության, ՏՏ կիրառական համակարգերի գնահատման և ապագա ինտեգրված ՏՏ համակարգի գնման տեխնիկական բնութագրի մշակման համար

Խորհրդատվական ծառայություններ (խորհրդատուների ընտրություն)

Բովանդակություն

1. Առաջադրանքի նպատակները 11
2. Ծառայությունների շրջանակը 12
   2.1 Ծառայությունների շրջանակը, փուլերը, հանձնվող արդյունքները և նախնական բովանդակությունը 12
   2.2 Շրջանակից դուրս գործողություններ 17
   2.3 Մեթոդաբանություն 18
3. Հաշվետվողականություն և հաղորդակցություն 18
4. Պահանջվող որակավորում 19
   4.1 Խորհրդատուի մակարդակի պահանջներ 19
5. Իրականացման կազմակերպումը 19
6. Տևողություն և վճարում 20
7. Մտավոր սեփականություն, տվյալների պաշտպանություն և գաղտնիություն 20
   (ա) Մտավոր սեփականություն և տվյալների պաշտպանություն 20
   (բ) Գաղտնիություն և շահերի բախում 22
Հետաքրքրվածության հայտի առդիրներ 24
   Առդիր Ա — Հետաքրքրվածության հայտի ներկայացման ստուգաթերթ 24
   Առդիր Բ — Շահերի բախման մասին հավաստման ձև (ձևանմուշ) 26
   Առդիր Գ — Գաղտնիության մասին հավաստման ձև (ձևանմուշ) 28
   Առդիր Դ — Հղումային առաջադրանքի ձևանմուշ 29

1. Առաջադրանքի նպատակները

Առաջադրանքի նպատակն է ապահովել, որպեսզի Ընկերությունները համատեղ կարողանան ձեռք բերել ապագա ինտեգրված ՏՏ համակարգ՝ հիմնվելով հիմնավոր, վավերացված և գնման գործընթացի համար լիարժեք պատրաստ տեխնիկական բնութագրի վրա։

Մասնավորապես, Խորհրդատուն պետք է՝

- Գնման տեխնիկական բնութագրի պատրաստման համար անհրաժեշտ մանրամասնության մակարդակով փաստաթղթավորել և վերլուծել Ընկերությունների վերաֆինանսավորման և դրան առնչվող բիզնես գործընթացները՝ ամբողջական շղթայով՝ սկզբից մինչև վերջ։
- Գնահատել ընթացիկ կիրառական ՏՏ համակարգերը, տվյալների փոխանակման մեխանիզմները, հաշվետվական կարիքները և վերահսկողական միջավայրը՝ ինտեգրման և ավտոմատացման հնարավորությունները բացահայտելու նպատակով։
- Պատրաստել գնման գործընթացի համար ամբողջական Տեխնիկական առաջադրանք, գնահատման չափանիշներ, գնային առաջարկների ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավելվածներ և ներդրման ճանապարհային քարտեզ։
- Սահմանել ապագա ինտեգրված ՏՏ համակարգի ամբողջական բիզնես, գործառնական, ոչ գործառնական, ինտեգրացիոն, տվյալների, հաշվետվական և տեղեկատվական անվտանգության պահանջները։
- Գնահատել և սահմանել ապագա ՏՏ համակարգում արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքակազմերի ինտեգրման հնարավոր ուղղությունները։
- Պատրաստել ապագա ինտեգրված ՏՏ համակարգի ձեռքբերման համար անհրաժեշտ ամբողջական փաստաթղթերը, ներառյալ՝ գնային առաջարկների ներկայացման գործընթացին պատրաստ Տեխնիկական

առաջադրանքը, գնահատման չափանիշները և համապատասխան աջակցող հավելվածները:

- Առաջարկել ներդրման ճանապարհային քարտեզ, փուլայնացում, հիմնական կախվածություններ և նախնական կանխատեսվող գնային միջակայքեր՝ Ընկերությունների հետագա պլանավորումը աջակցելու նպատակով:

2. Ծառայությունների շրջանակը

2.1 Ծառայությունների շրջանակը, փուլերը, հանձնվող արդյունքները և նախնական բովանդակությունը

Առաջադրանքը խորհրդատվական (խորհրդատվական-մասնագիտական) ծառայությունների մատուցում է: Խորհրդատուն պատասխանատու է լինելու ինտեգրված SS համակարգի ապագա գնմանն աջակցելու համար անհրաժեշտ բիզնես, գործառական, ոչ գործառական, տվյալների, ինտեգրման, անվտանգության, հաշվետվողականության, ապագա AI/ML-պատրաստվածության և տրամաբանական ճարտարապետության պահանջների մշակման համար: Ծառայությունները ներառում են՝

- Ընկերությունների վերաֆինանսավորման և հարակից բիզնես գործընթացների, կիրառական SS համակարգերի, տվյալների հոսքերի, վերահսկողական մեխանիզմների և շահառուների փոխգործակցության ընթացիկ՝ առկա (As-Is) վիճակի վերաբերյալ կառուցվածքային հաշվետվության պատրաստում՝ հիմնվելով փաստաթղթերի ուսումնասիրության, համակարգերի գործնական դիտարկումների և շահառուների հետ խորհրդակցությունների վրա:
- Գործընթացային և ինտեգրացիոն բացերի, ձեռքով իրականացվող գործողությունների, վերահսկողական թերությունների և ավտոմատացման հնարավորությունների բացահայտում և վավերացում:

- Թիրախային (To-Be) գործընթացների մոդելի և տրամաբանական թիրախային ճարտարապետության սահմանում՝ ներառյալ տվյալների, ինտեգրման և հաշվետվողականության նկատառումները,
- Ապագա ինտեգրված SS համակարգի ամբողջական, հետագծելի և ստուգելի պահանջների պատրաստում,
- Ապագա SS համակարգում AI/ML կարողությունների ինտեգրման հնարավոր ապագա հնարավորությունների գնահատում և սահմանում,
- Գնային առաջարկների ներկայացման գործընթացի համար լիարժեք պատրաստ Տեխնիկական առաջադրանքի, գնահատման չափանիշների և շուկային ներկայացնելու համար պիտանի հավելվածների պատրաստում։
- Ներդրման ճանապարհային քարտեզի մշակում՝ ներառյալ փուլայնացումը, հիմնական կախվածությունները, նախնական գնային միջակայքերը և համապատասխան առաջարկությունները։
- Գիտելիքների փոխանցում և վերջնական հաշվետվության ներկայացում Ընկերություններին։

Գործընթացների մանրամասն բնութագրերը, կիրառվող ներքին համակարգերի ցանկը և օժանդակ փաստաթղթերը կտրամադրվեն Գնման առաջարկի հարցման (RFP) փուլում ցուցակում ընդգրկված հայտատուներին՝ համապատասխան գաղտնիության պահպանման դրույթների ներքո։

Խորհրդատուն կպատրաստի ստորև ներկայացված արդյունքները, որոնք կազմակերպված են ութ փուլերով։ Փուլերի մանրամասն բովանդակությունը, հաջորդականությունը, օրացուցային ժամկետները և արդյունքների ներկայացման ժամկետները կհաստատվեն Մեկնարկային հաշվետվությամբ և կսահմանվեն պայմանագրով։ Բոլոր արդյունքները պետք է ներկայացվեն խմբագրելի էլեկտրոնային ձևաչափով՝ հայերենով։

Փուլ	Ակնկալվող արդյունք	Ուղորդիչ բովանդակություն
Փուլ 1 **Մեկնարկ և մոբիլիզացիա**	**D1** **Մեկնարկային հաշվետվություն և աշխատանքային պլան**	Հաստատված շրջանակ, նպատակներ, մեթոդաբանություն, շահագրգիռ կողմերի քարտեզ, կառավարման կառուցվածք, RACI մատրիցա, հաղորդակցության պլան, մանրամասն աշխատանքային պլան, պահանջվող փաստաթղթերի ցանկ, ենթադրությունների մատյան, RAID մատյան, որակի ապահովման մոտեցում, հանձնվող արդյունքների վերանայման և ընդունման գործընթաց:
Փուլ 2 **Ուսումնասիրություն և առկա (As-Is) վիճակի գնահատում**	**D2** **Առկա (As-Is) գործընթացների, կիրառական համակարգերի, տվյալների, հաշվետվողականության և հսկողության մեխանիզմների գնահատում**	Վավերացված առկա (As-Is) գործընթացների քարտեզագրում, գործընթացների նկարագրություններ, շահագրգիռ կողմերի փոխգործակցության մոդել, կիրառական համակարգերի գույքագրում, համակարգերի օգտագործման գնահատում, ինտեգրման/տվյալների փոխանակման կատալոգ, հաշվետվությունների գույքագրում, փաստաթղթերի/ձևանմուշների գույքագրում, հսկողության մեխանիզմների ելակետային վիճակ, խնդրահարույց կետերի ռեգիստր, մարդկային միջամտությամբ (manul) կատարվող շրջանցիկ լուծումների ռեգիստր, կրկնությունների և անարդյունավետությունների վերլուծություն, նախնական ռիսկեր և բարելավման հնարավորություններ:
Փուլ 3 **Բացերի վերլուծություն և թիրախային (To-Be) գործընթացի նախագծում**	**D3** **Բացերի վերլուծություն, ակնկալվող (To-Be) գործընթացների մոդել և թիրախային**	Բացերի ռեգիստր, ավտոմատացման հնարավորություններ, To-Be գործընթացների քարտեզներ, ապագա դերեր և պարտականություններ, թիրախային գործառնական մոդելի մուտքային տվյալներ, հսկողության մեխանիզմների բարելավումներ,

Փուլ	Ակնկալվող արդյունք	Ուղորդիչ բովանդակություն
	գործառնական մոդելի մուտքային տվյալներ	փոփոխությունների ազդեցության գնահատում, առաջնահերթություններով դասակարգված բարելավումների ցանկ, կախվածությունների մատյան:
Փուլ 4 Թիրախային ճարտարապետության, տվյալների, ինտեգրման և հաշվետվողականության նախագիծ	**D4 Տրամաբանական թիրախային ճարտարապետություն և տեղեկատվական նախագիծ**	Բիզնես կարողությունների քարտեզ, կիրառական համակարգերի տրամաբանական ճարտարապետություն, ինտեգրման ճարտարապետություն, տվյալների տիրույթների մոդել, հիմնական (master) տվյալների սեփականատիրության պատկեր, տվյալների կառավարման (data governance) պահանջներ, հաշվետվողականության և վերլուծության ճարտարապետություն, մուտքի հսկողության հայեցակարգ, աուդիտի ենթակա լինելու պահանջներ, փոխգործելիության պահանջներ, տվյալների միգրացիայի նկատառումներ և գնման համար ճարտարապետական ենթադրություններ:
Փուլ 5 Պահանջների սահմանում	**D5 Պահանջների փաթեթ և հետագծելիության ելակետ**	Ամբողջական բիզնես, գործառնական, ոչ գործառնական, ինտեգրման, տվյալների, հաշվետվողականության, անվտանգության, աուդիտի, աշխատանքային հոսքերի, միգրացիայի, օգտագործելիության, արտադրողականության, հասանելիության, ընդլայնելիության, սպասարկելիության և աջակցության պահանջներ: Ներառում է պահանջների նույնականացուցիչներ (ID), աղբյուր, առաջնահերթություն, պարտադիր/ցանկալի դասակարգում, ընդունման չափանիշներ, ստուգման մեթոդ և պահանջների հետագծելիության մատրիցա:

Փուլ	Ակնկալվող արդյունք	Ուղորդիչ բովանդակություն
Փուլ 6 AI/ML ապագա ինտեգրման գնահատում	**D6 Ապագա AI/ML ինտեգրման հնարավորությունների գնահատում**	Ապագա SS համակարգում AI/ML կարողությունների ինտեգրման հնարավոր ապագա հնարավորությունների գնահատում և սահմանում:
Փուլ 7 Գնման փաթեթ	**D7 Ապագա ինտեգրված SS համակարգի գնման փաթեթ**	Գնման համար պատրաստ Տեխնիկական առաջադրանք, մատակարարման/ծառայությունների շրջանակ, պահանջների հավելվածներ, պահանջներին համապատասխանության մատրիցա, մասնակցի պատասխանի ձևանմուշներ, տեխնիկական առաջարկի կառուցվածք, գնային աղյուսակի ձևանմուշ, ներդրման մեթոդաբանության ձևանմուշ, գնահատման մեթոդաբանություն, միավորային գնահատման չափանիշներ, անցողիկ/ոչ անցողիկ (pass/fail) չափանիշներ, պարզաբանումների/ցուցադրության/փորձնական մոդելի (PoC) մոտեցում՝ կիրառելիության դեպքում, և ընդունման/փորձարկման մոտեցում:
Փուլ 8 Ճանապարհային քարտեզ, վերջնական հաշվետվություն և գիտելիքների փոխանցում	**D8 Ներդրման ճանապարհային քարտեզ, վերջնական հաշվետվություն և գիտելիքների փոխանցում**	Առաջարկվող ներդրման ճանապարհային քարտեզ, փուլավորման տարբերակներ, գնման և ներդրման ռիսկեր, տվյալների միգրացիայի մոտեցում, փոփոխությունների կառավարման նկատառումներ, վերջնական հաշվետվություն, ղեկավար կազմին ուղղված շնորհանդես, գիտելիքների փոխանցման հանդիպում և խմբագրելի սկզբնական ֆայլեր:

Յուրաքանչյուր հանձնվող արդյունքի ընդունման մանրամասն չափանիշները, վերանայման ցիկլերը և հաստատման ընթացակարգը կսահմանվեն ընտրված խորհրդատուի հետ կնքվող պայմանագրով:

2.2 Շրջանակից դուրս գործողություններ

Սույն առաջադրանքից բացառվում են հետևյալ գործողությունները՝

- Ապագա ինտեգրված SS համակարգի մանրամասն տեխնիկական լուծման նախագծում, կառուցման (build) նախագծում կամ կոնկրետ մատակարարին հատուկ ներդրման նախագծում,
- Ցանկացած տեսակի ծրագրային ապահովման մշակում, կարգաբերում (configuration), հարմարեցում (customization), ինտեգրման իրականացում կամ ծրագրավորում,
- Արտադրական (production) տվյալների միգրացիա, տեղակայում, հոսթինգ, համակարգի շահագործում կամ հետներդրումային աջակցություն,
- Սարքավորումների, ծրագրային ապահովման լիցենզիաների, ամպային ծառայությունների կամ երրորդ կողմի որևէ հարթակի գնում,
- Աուդիտի, կարգավորող ստուգման կամ պաշտոնական իրավաբանական եզրակացության ծառայություններ,
- Ցանկացած գործունեություն, որը կարող է վտանգել Խորհրդատուի անաչառությունը ապագա ինտեգրված SS համակարգի ներդրման հետագա գնման ընթացակարգի առնչությամբ:

Գործընթացների մանրամասն քարտեզներին, համակարգերի կարգաբերումներին, անվտանգության նախագծերին, հաստատման կանոններին, ինտեգրման տրամաբանությանը, մուտքի հսկողության մեխանիզմներին կամ որևէ այլ զգայուն գործառնական մանրամասներին հասանելիություն Հետաքրքրվածության հայտերի ներկայացման փուլում չի տրամադրվելու: Նման տեղեկատվությունը հասանելի կդառնա ընտրված ցուցակում ընդգրկված մասնակիցներին RFP փուլում՝ «անհրաժեշտ է իմանալ» սկզբունքով և համապատասխան գաղտնիության պահպանման դրույթների ներքո:

2.3 Մեթոդաբանություն

Խորհրդատուն պետք է կիրառի բիզնես վերլուծության և պահանջների մշակման (requirements engineering) կառուցվածքային մեթոդաբանություն՝ միջազգային լավագույն փորձին համահունչ (օրինակ՝ BABOK®, BPMN 2.0, ISO ստանդարտներ և համարժեք շրջանակներ)։

3. Հաշվետվողականություն և հաղորդակցություն

Առաջադրանքի Պատվիրատուն Ընկերությունների կողմից նշանակված ղեկավար մարմինն է։ Խորհրդատուն բոլոր հաշվետվությունները ներկայացնում է Պատվիրատուին։ Ընկերությունները կձևավորեն՝

- Նախագծային կոմիտե՝ որպես բարձրագույն որոշումներ կայացնող մարմին, որը պատասխանատու է շրջանակի փոփոխությունների, փուլային արդյունքների, էսկալացիաների և գնման վերջնական փաթեթի հաստատման համար,
- Ծրագրի աշխատանքային խումբ՝ որպես գործառնական համակարգման մարմին, որը պատասխանատու է շահագրգիռ կողմերի ներգրավման համակարգման, նախագծերի վերանայման, դիտողությունների համախմբման և արդյունքների վավերացման համար,
- Ծրագրի/պայմանագրի կառավարիչ, որը հանդես է գալիս որպես ժամանակացույցի, հաղորդակցության, հանձնվող արդյունքների ներկայացման և ընդունման ընթացակարգի միասնական համակարգող։

Խորհրդատուն պետք է նշանակի Ծրագրի ղեկավար (Engagement Manager), որը պատասխանատու է մատուցման որակի, անձնակազմի ապահովման, ժամանակացույցի և խնդիրների լուծման համար։

Խորհրդատուն պարբերաբար ներկայացնում է ընթացիկ հաշվետվություններ և մասնակցում աշխատանքային խմբի ու նախագծային կոմիտեի նիստերին։ Հաշվետվողականության նախնական կարգը ներառում է շաբաթական

կարգավիճակի հաշվետվություններ, աշխատանքային խմբի հանդիպումներ, երկշաբաթյա հաշվետվություններ նախագծային կոմիտեին և յուրաքանչյուր հիմնական հանձնվող արդյունքի վերանայման աշխատաժողով: Հաշվետվողականության վերջնական պարբերականությունը, ձևաչափերը և վերանայման աշխատաժողովները կհաստատվեն Մեկնարկային հաշվետվությունում:

Հանձնվող արդյունքները ենթակա են Պատվիրատուի պաշտոնական հաստատման: Նախագծերը կտրամադրվեն կարծիքի համար՝ մինչև վերջնական ներկայացումը:

4. Պահանջվող որակավորում

4.1 Խորհրդատուի մակարդակի պահանջներ

Հայտատու կազմակերպությունը (կամ կոնսորցիումը) պետք է ապացուցի Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերում («Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավեր» բաժին) սահմանված Խորհրդատուի մակարդակի նվազագույն որակավորումները, որոնք կիրառվում են առաջին փուլի ընտրված մասնակիցների ցուցակի ձևավորման համար:

5. Իրականացման կազմակերպումը

Ընկերությունների կառուցվածքային ստորաբաժանումները կտրամադրեն տեխնիկական տվյալներ և կիրականացնեն վավերացում: Խորհրդատուն սերտորեն կաշխատի նշանակված պատասխանատու անձանց հետ և կապահովի համակարգումը բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Ընկերությունները կնպաստեն համապատասխան փաստաթղթերի, համակարգերի դիտարկումների (walk-through) և շահագրգիռ կողմերի հասանելիությանը՝ կիրառելի գաղտնիության և տվյալների պաշտպանության դրույթների պահպանմամբ:

Ամենօրյա համակարգումն իրականացնելու է Ընկերությունների կողմից նշանակված Ծրագրի/պայմանագրի կառավարիչը: Էական որոշումները, շրջանակի փոփոխությունները և հանգուցային արդյունքների հաստատումները կներկայացվեն Նախագծային կոմիտեին:

6. Տևողություն և վճարում

Ակնկալվում է, որ առաջադրանքը կտևի չորս (4) ամիս՝ պայմանագրի ստորագրման պահից, ինչը ենթակա է հաստատման Մեկնարկային հաշվետվությունում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կկատարվեն Ընկերությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության դրամով (AMD)՝ մաս-մաս, կապված Պատվիրատուի կողմից հանձնվող արդյունքների պաշտոնական ընդունման հետ: Կանխավճարը չի կարող գերազանցել պայմանագրի արժեքի տասնհինգ տոկոսը (15%): Վճարումների մանրամասն ժամանակացույցը, օժանդակ փաստաթղթերի պահանջները և ընդունման ընթացակարգը կսահմանվեն պայմանագրով և կհամապատասխանեցվեն սույն Հավելված Ա-ի 2-րդ բաժնում սահմանված հանձնվող արդյունքների կառուցվածքին:

Վերջնական վճարումը կկատարվի միայն Պատվիրատուի կողմից բոլոր հանձնվող արդյունքների պաշտոնական հաստատումից և ընդունումից հետո:

7. Մտավոր սեփականություն, տվյալների պաշտպանություն և գաղտնիություն

(ա) Մտավոր սեփականություն և տվյալների պաշտպանություն

Սույն առաջադրանքի շրջանակում ստեղծված բոլոր հանձնվող արդյունքները, հաշվետվությունները, մոդելները, գործիքները և այլ նյութերը դառնում են Ընկերությունների բացառիկ սեփականությունը: Ընկերություններն իրավունք ունեն առանց որևէ սահմանափակման օգտագործելու, վերարտադրելու, փոփոխելու, հարմարեցնելու, թարգմանելու, բացահայտելու և ամբողջությամբ կամ

մասնակիորեն ներառելու այդ արդյունքները ապագա ինտեգրված SS համակարգի հետագա գնման փաստաթղթերում կամ հարակից գործընթացներում: Խորհրդատուն կարող է պահպանել իր ընդհանուր մասնագիտական մեթոդաբանությունները և գիտելիքները (know-how)՝ պայմանով, որ դրանք չեն ներառում կամ բացահայտում Ընկերություններին վերաբերող որևէ ոչ հրապարակային տեղեկատվություն, ՀՀ օրենսդրությամբ պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն, անձնական տվյալներ, գործառնական կամ բիզնես գործընթացների վերաբերյալ տեղեկություններ, համակարգային տեղեկատվություն կամ առաջադրանքին առնչվող նյութեր: Առաջադրանքում օգտագործվող ցանկացած նախկինում ստեղծված նյութ և երրորդ կողմի մտավոր սեփականություն պետք է հստակորեն բացահայտվի Ընկերություններին՝ կիրառելի լիցենզային պայմանների մանրամասների նշումով: Բաց կոդով (open-source) բաղադրիչներին հղում կատարելու դեպքում Խորհրդատուն պետք է տրամադրի այդ բաղադրիչների ցանկը՝ դրանց լիցենզիաների և կիրառելի պարտավորությունների հետ միասին: Խորհրդատուն պետք է ապահովի, որ նման նյութերի օգտագործումը չսահմանափակի հանձնվող արդյունքների՝ Ընկերությունների կողմից նախատեսված օգտագործումը ապագա ինտեգրված SS համակարգի գնման և հարակից գործունեության նպատակներով:

Խորհրդատուն ամբողջ առաջադրանքի ընթացքում պետք է ապահովի լիարժեք համապատասխանություն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (ՀՕ-49-Ն, 2015 թվականի մայիսի 18), վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից հաճախորդների տեղեկատվության մշակումը կարգավորող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ոլորտային կարգավորմանը, ինչպես նաև տվյալների պաշտպանության, գաղտնիության և տեղեկատվական անվտանգության բոլոր այլ կիրառելի օրենքներին և քաղաքականություններին: Ընկերություններից ստացված ցանկացած անձնական տվյալ կամ այլ պաշտպանվող տեղեկատվություն մշակվում է բացառապես սույն առաջադրանքի

նպատակներով՝ կիրառելի օրենսդրությանը և Ընկերությունների ցուցումներին համապատասխան։

(բ) Գաղտնիություն և շահերի բախում

Խորհրդատուն պարտավորվում է խստորեն պահպանել առաջադրանքի ընթացքում ստացված ողջ տեղեկատվության գաղտնիությունը, ներառյալ՝ բիզնես, գործառնական, ֆինանսական, տեխնիկական, համակարգերին, հաճախորդներին, գնումներին առնչվող և այլ ներքին տեղեկատվությունը, որը հանրությանը հասանելի չէ։ Նման տեղեկատվությունը չի կարող բացահայտվել երրորդ անձանց առանց Ընկերությունների նախնական գրավոր համաձայնության։ Գաղտնիության պարտավորությունները ուժի մեջ են մնում պայմանագրի ավարտից կամ լուծումից հետո՝ 10 տարի ժամկետով։

Խորհրդատուն և նրա ողջ անձնակազմը (ներառյալ ցանկացած հաստատված ենթակապալառու) պետք է ստորագրեն Գաղտնիության (չբացահայտման) համաձայնագրի (ԳՀ) ձևանմուշը՝ նախքան Ընկերությունների մանրամասն փաստաթղթերին կամ համակարգերին հասանելիություն ստանալը։ ԳՀ ձևանմուշը կտրամադրվի ընտրված մասնակիցների ցուցակում ընդգրկված խորհրդատուներին RFP փուլում։

Խորհրդատուն պետք է ծանուցի Ընկերություններին գաղտնի տեղեկատվության կամ պաշտպանվող տվյալների փաստացի կամ ենթադրյալ չթույլատրված հասանելիության, բացահայտման, կորստի կամ չարաշահման ցանկացած դեպքի մասին։

Խորհրդատուն չպետք է ներգրավվի որևէ առաջադրանքում կամ գործունեության մեջ, որը կարող է առաջացնել շահերի բախում սույն խորհրդատվության հետ։ Մասնավորապես, Խորհրդատուն, նրա մայր ընկերությունը, դուստր ընկերությունները, փոխկապակցված անձինք, համատեղ գործունեության գործընկերները, ենթակապալառուները և սույն առաջադրանքի շրջանակում առաջարկված յուրաքանչյուր Հիմնական փորձագետ ինքնաշխատ կերպով և

անվերապահորեն զրկվում են ապագա ինտեգրված SS համակարգի կամ դրա որևէ բաղադրիչի հետագա ցանկացած գնման ընթացակարգին ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցելու իրավունքից՝ որպես մասնակից, կոնսորցիումի անդամ, ենթակապալառու, մատակարար, ինտեգրատոր, խորհրդատու կամ մասնակցի գործընկեր կամ դրանց հետ փոխկապակցված անձ։

Սույն սահմանափակման իմաստով՝ սույն բաժնում օգտագործված բոլոր եզրույթները մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենսդրությանը համապատասխան այնքանով, որքանով այդ եզրույթները սահմանված կամ կարգավորված են այդ օրենսդրությամբ, իսկ մնացած դեպքերում՝ սույն Տեխնիկական առաջադրանքի համատեքստին ու նպատակին համապատասխան։

Սույն բաժնում սահմանված գաղտնիության, տվյալների պաշտպանության, մտավոր սեփականության և շահերի բախման պահանջների պահպանումը կհանդիսանա ընտրված Խորհրդատուի հետ կնքվելիք պայմանագրի էական պայման։ Լրացուցիչ մանրամասները կսահմանվեն պայմանագրով և կիրառելի Գաղտնիության (չբացահայտման) համաձայնագրով։

Հետաքրքրվածության հայտի առդիրներ

Սույն հետաքրքրվածության հայտի հետ տրամադրվում են հետևյալ ձևանմուշները։ Լրացուցիչ հավելվածները, ներառյալ՝ մանրամասն հավելվածներով ամբողջական Տեխնիկական առաջադրանքը, ԳՀ-ի ձևանմուշը և ստանդարտ մասնակցությանփաստաթղթերը, կտրամադրվեն միայն ընտրված մասնակիցների ցուցակում ընդգրկված խորհրդատուներին՝ RFP փուլում, համապատասխան գաղտնիության պահպանման դրույթների ներքո։

Առդիր Ա — Հետաքրքրվածության հայտի ներկայացման ստուգաթերթ

Խորհրդատուներին առաջարկվում է մինչև ուղարկելը ստուգել իրենց հայտի ամբողջականությունը հետևյալ ստուգաթերթի միջոցով։

Հղում	Կետ	Ներառված է (Այո/Ոչ)
R1	Լիազորված ներկայացուցչի կողմից ստորագրված ուղեկցող նամակ	
R2	Կազմակերպության նկարագիր՝ կազմակերպաիրավական ձևի և կարողությունների մանրամասներով	
R3	Փորձառության նկարագրություն՝ առնվազն երեք (3) հղումային առաջադրանքով	
R4	Ուլորտային փորձի ապացույց (ֆինանսական հաստատություններ / վերաֆինանսավորում)	
R5	Միջազգային ծրագրերի փորձ (կիրառելիության դեպքում)	
R6	Որակի և տեղեկատվական անվտանգության հավաստագրեր	
R7	Լեզվական կարողությունների մասին հայտարարություն (հայերեն և/կամ անգլերեն)	

Հղում	Կետ	Ներառված է (Այո/Ոչ)
R8	Կարողությունների մասին հայտարարություն (անձնակազմ և ռեսուրսներ)	
R9	Շահերի բախման մասին հավաստում (ստորագրված)	
R10	Գաղտնիության մասին հավաստում (ստորագրված)	

Առդիր Բ — Շահերի բախման մասին հավաստման ձև (ձևանմուշ)

Լրացվում է կազմակերպության պաշտոնական ձևաթղթի վրա և ստորագրվում լիազորված ներկայացուցչի կողմից։

Մենք՝ [կազմակերպության անվանումը], ուսումնասիրելով ԱՀԸ-ի և ԲԵ-ի (այսուհետ՝ Ընկերություններ) կողմից [Գնման ծածկագիր] ծածկագրով հրապարակված Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերը, սույնով հավաստում ենք, որ՝

- Առաջարկների ներկայացման հարցման (RFP) փուլում ընտրվելու դեպքում մեր կազմակերպությունը՝ իր մայր ընկերության, դուստր ընկերությունների, փոխկապակցված անձանց, համատեղ գործունեության գործընկերների, ենթակապալառուների և սույն առաջադրանքի շրջանակում առաջարկված յուրաքանչյուր Հիմնական փորձագետի հետ միասին, ինքնաշխատ կերպով և անվերապահորեն զրկվելու է ապագա ինտեգրված SS համակարգի կամ դրա որևէ բաղադրիչի հետագա ցանկացած գնման ընթացակարգին ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցելու իրավունքից,
- Մենք գնահատել ենք այս սահմանափակման ազդեցությունը մեր առևտրային և ռազմավարական ծրագրերի վրա և հաստատում ենք, որ պատրաստ ենք պահպանել այն՝ որպես կնքվելիք ցանկացած պայմանագրի էական պայման,
- Հաստատում ենք, որ սույն գնման առնչությամբ չունենք չբացահայտված շահերի բախում,
- Պարտավորվում ենք անհապաղ բացահայտել Ընկերություններին ցանկացած փաստացի, հնարավոր կամ ընկալվող շահերի բախում, որը կարող է առաջանալ կամ հայտնի դառնալ սույն գնման կամ առաջադրանքի կատարման ընթացքում,
- Ընդունում ենք, որ շահերի բախման չբացահայտումը, ոչ ճշգրիտ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության ներկայացումը կամ վերոնշյալ

սահմանափակման խախտումը կարող է հանգեցնել Հետաքրքրվածության հայտի կամ առաջարկի մերժման, որակազրկման, մեզ հետ կնքված ցանկացած պայմանագրի լուծման և/կամ գնման փաստաթղթերով, պայմանագրով ու կիրառելի օրենսդրությամբ նախատեսված այլ հետևանքների։

Ստորագրություն՝ _____

Անուն և պաշտոն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Առդիր Գ — Գաղտնիության մասին հավաստման ձև (ձևանմուշ)

Լրացվում է կազմակերպության պաշտոնական ձևաթղթի վրա և ստորագրվում լիազորված ներկայացուցչի կողմից։

Մենք՝ [կազմակերպության անվանումը], ուսումնասիրելով ԱՀԸ-ի և ԲԵ-ի (այսուհետ՝ Ընկերություններ) կողմից [Գնման ծածկագիր] ծածկագրով հրապարակված Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերը, ընդունում ենք, որ սույն Հետաքրքրվածության հայտերի ներկայացման հրավերի կապակցությամբ Ընկերություններից ստացված կամ դրանց վերաբերող ողջ ոչ հրապարակային տեղեկատվությունը դիտարկվելու է որպես գաղտնի։ Նման տեղեկատվությունն օգտագործվելու է բացառապես սույն գնման նպատակներով և չի բացահայտվելու որևէ երրորդ անձի՝ առանց Ընկերությունների նախնական գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտումը պահանջվում է կիրառելի օրենսդրությամբ։

Ընդունում ենք, որ ընտրված մասնակիցների ցուցակում ընդգրկվելու դեպքում մեզանից կպահանջվի ստորագրել առանձին Գաղտնիության (չբացահայտման) համաձայնագիր՝ նախքան Ընկերությունների մանրամասն գործառնական, տեխնիկական, համակարգերին առնչվող, անձնական տվյալներին առնչվող կամ այլ զգայուն տեղեկատվություն ստանալը, և որ այդ համաձայնագրով կարող են սահմանվել գաղտնիության, տվյալների պաշտպանության, տեղեկատվական անվտանգության, վերադարձման/ոչնչացման և պատասխանատվության առավել մանրամասն պարտավորություններ։

Ստորագրություն՝ _____

Անուն և պաշտոն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Առդիր Դ — Հղումային առաջադրանքի ձևանմուշ

Լրացվում է Հետաքրքրվածության հայտը հիմնավորող յուրաքանչյուր հղումային առաջադրանքի համար։

Դաշտ	Մանրամասներ
Ծրագրի անվանումը	
Պատվիրատուի անվանումը և երկիրը	
Պատվիրատուի ոլորտը (օր.՝ ֆինանսական ծառայություններ)	
Իրականացման ժամանակահատվածը (սկիզբ – ավարտ)	
Կազմակերպության դերը (գլխավոր / ենթախորհրդատու / համատեղ ձեռնարկման գործընկեր)	
Մատուցված ծառայությունների համառոտ նկարագրությունը	
Պատվիրատուի կոնտակտային անձը երաշխավորության համար (անուն, էլ. փոստ, հեռախոս)	